Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ»

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությունը ձևակերպված է ըստ աշխարհագրական չափանիշի և ժամանակագրական կտրվածքով: Այսինքն՝ ենթադրում է լեզուների մի համակարգ, որոնք այսօր տարածված են կամ երբևէ գոյություն են ունեցել կոնկրետ մի աշխարհամասում, այն է՝ Ասիայում՝ անկախ նրանց ցեղակցական կապերից: Ըստ էության, խոսքը գնում է այսպես կոչված «արևելյան» լեզուների մասին, սակայն որովհետև դրանց մի զգալի մասը գենետիկորեն կապվում է այսպես կոչված «արևմտյան» լեզուների հետ (օրինակ՝ հնդեվրոպական ծագման), ուստի հիմք է ընտրված հենց աշխարհագրական չափանիշը:

Սույն մոտեցումը, հասկանալի է, բնավ չի բացասում լեզուների դասակարգման ծագումնաբանական սկզբունքը, ընդհակառակը՝ իր իմացաբանական գործիքակազմով լիովին գտնվում է հենց պատմահամեմատական լեզվաբանության մեթոդաբանության և լեզուների ցեղակցության դաշտի շրջանակներում:

Միևնույն ժամանակ, մասնագիտությունը ենթադրում է տարաբնույթ գիտական տեսությունների և մոտեցումների կիրառման դաշտ՝ կախված ոչ միայն կոնկրետ լեզվից կամ ցեղակից լեզուների խմբից, այլև դրանց ուսումնասիրման մեթոդից և մեթոդոլոգիայից՝ ինչպես համաժամանակյա (*սինխրոն*), այնպես էլ տարաժամանակյա (*դիախրոն*) կտրվածքով: Պարզ ասած՝ մասնագիտության շրջանակները ընդգրկում են ինչպես պատմահամեմատական լեզվաբանության, այնպես էլ տիպաբանական, տարածքային (*արեալային*), կառուցվածքային (*ստրուկտուրալ*), մաթեմատիկական, վիճակագրական, լեզվահոգեբանական, սոցիո-լեզվաբանական և այլ ուղղությունների սկզբունքներն ու մեթոդները:

Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտության բնույթը, այսպիսով, բավական համապարփակ է, իսկ ոլորտի շրջանակները՝ լայն: Մասնագիտությունը ընդգրկում է իրարից արմատապես տարբերվող լեզվաընտանիքներ և մշակույթներ, որոնցից մի քանիսը իրապես տեղակայված են Արևելքում՝ Ասիայի աշխարհամասում, իսկ որոշները իրենց ներկայացուցիչներն ունեն՝ պայմանականորեն ասած Արևմուտքում: Վերջին դեպքում խոսքը գնում է, իհարկե, հիմնականում հնդեվրոպականլեզվաընտանիքի մասին, որը սփռված է ամբողջ աշխարհով մեկ:

Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությունը ենթադրում է հետևյալ լեզվաընտանիքներին և լեզվախմբերին առնչվող լեզվաբանական գիտության՝ ըստ ընտրած լեզվի կամ լեզվախմբի և կիրառվող մեթոդի ու մեթոդաբանության բնույթի, համակարգային իմացություն:

Հնդ-իրանական լեզուներ (այդ թվում մեռած՝ Ավեստայի լեզու, հին հնդկերեն, հին պարսկերեն, սկյութերեն, սողդերեն, խորեզմերեն, պարթևերեն, միջին պարսկերեն և այլն)՝ պարսկերեն, քրդերեն, բելուջերեն, թալիշերեն, աֆղաներեն (փաշտո), օսերեն և այլն (*իրանական լեզուներ*), հինդի, ուրդու, փենջաբի, բենգալի, սինգալերեն և այլն (*հնդկական լեզուներ*).

Սեմական (աֆրոասիական) լեզուներ (այդ թվում մեռած՝ աքքադերեն, արամերեն, հին եբրայերեն և այլն)՝ արաբերեն, եբրայերեն, նոր արամեական բարբառներ, եթովպերեն և այլն.

Ուրարտերեն և խուրիերեն (Հայկական լեռնաշխարհում և Միջագետքում տարածված մեռած լեզուներ, որոնք վկայված են բազմաթիվ սեպագիր արձանագրություններում).

Էլամերեն (Իրանի տարածքի մեռած լեզու է՝ վկայված բազմաթիվ հուշարձաններում).

Թյուրքական լեզուներ (այդ թվում մեռած՝ հին թյուրքերեն, մանիքեական բնագրեր, հայատառ ղըփչաղերեն, օսմաներեն և այլն)՝ թուրքերեն, ադրբեջաներեն, թուրքմեներեն, ղըրղըզերեն, ղազախերեն, ույղուրերեն և այլն.

Կովկասյան լեզուներ (իբերո-կովկասյան, նախ-դագեստանյան, աբխազո-ադիգյան)՝ վրացերեն, սվաներեն, մինգրելերեն, լազերեն, լեզգիերեն, լակերեն, ավարերեն, աբխազերեն, ադըղերեն և այլն.

Դրավիդյան լեզուներ՝ թամիլի, մալայալամ, տելեգու, բրահուի և այլն.

Մոնղոլական լեզուներ՝ մոնղոլերեն, բուրյաթերեն, կալմիկերեն, օյրաթերեն (*հյուսիսային մոնղոլական սինհարմոնիկ լեզուներ*), դագուրերեն, դունսյաներեն, մոնգորերեն, բաոներեն (*հարավարևելյան ոչ սինհարմոնիկ լեզուներ*).

Սինո-տիբեթական լեզուներ՝ չինարեն, թայերեն, լաոսերեն, տիբեթերեն և այլն (*թայ-չինական լեզուներ*), տիբեթա-կանաուրյան, կիրանտի, միրի, կաչի, լոլո-բիրմանական, բարիչի, կուկի-չժնանգա (*տիբեթա-բիրմանական*).

Տունգուս-մանջուրական լեզուներ՝ էվենկերեն (տունգուսերեն), էվեներեն (լամութերեն), նեգիդալերեն, սոլոներեն (*տունգուսական*), մանջուրերեն,

չժուրչժեներեն (ջուրջեներեն), նանայերեն (գոլդերեն), ուդեգեյերեն, օրոչերեն, ուլչերեն (*մանջուրական*).

Ճապոներեն. համարվում է իզոլացված լեզու, չունի հստակ ընդգծված ցեղակից, չնայած որոշ հեղինակներ այն մտցնում են Ալթայական մեգալեզվաընտանիքի մեջ:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ

- Ըստ մասնագիտացման՝ լեզվաընտանիքի/ լեզվախմբի (որին պատկանում է մասնագիտացման լեզուն կամ բարբառախումբը) տարածման աշխարհագրական սահմանները և անվանացանկային բնութագրումը:
- Լեզվաընտանիքի/ լեզվախմբի ծագման և ձևավորման ժամանակագրությունը:
- Լեզվաընտանիքի/ լեզվախմբի ժամանակագրական և բարբառային բաժանումը:
- Լեզվաընտանիքը/ լեզվախումբը միավորող իզոգլոսները (զուգաբանությունները).

  ա) հնչյունական զուգաբանություններ

  բ) ձևաբանական և բառակազմական զուգաբանություններ

  գ) բառային զուգաբանություններ

- Տվյալ լեզվաընտանիքին/ լեզվախմբին վերաբերող պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման պատմությունը:
- Նոստրատիկ մեգալեզվաընտանիքի գաղափարը:
- Հնդեվրոպական լեզվաընտանքի ձևավորման և նախահայրենիքի տեսությունները:
- Հնդիրանական գաղթը՝ ժամանակաշրջանը և դրան առնչվող տեսությունները:
- Հնդարիացիները Առաջավոր Ասիայում և Սև ծովի հյուսիսում՝ Մայրոֆերի, Դյակոնովի և Տրուբաչյովի տեսությունները:
- Հնդեվրոպական լարինգալների տեսությունը՝ պատմությունն ու ներկա իրավիճակը:
- Ալթայական մեգալեզվաընտանիքի ծագման տեսությունները:
- Աֆրասիական մեգալեզվաընտանիքի տեսությունը. սեմական լեզվաընտանիք. գրային համակարգերը:

- Հնդկական թերակղզու նախարիական լեզուները. դրավիդյան լեզուներ և մունդա:
- Հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում. Հայ-իրանական լեզվական առնչությունները. Հյուբշմանի տեսությունը հայերենի ոչ իրանական բնույթի մասին:
- Ստուգաբանություն և Էթիմոնի գաղափարը:
- Լեզվի լիարժեք բառեր և հնչաիմաստային բառույթներ՝ իդիոֆոններ. դրանց տարբերակման սկզբունքները, չափանիշներն ու օրինաչափությունները:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) բնագրային վկայությունները և դրանց լեզուն՝ ըստ ժամանակագրական կարգի (արխաիկ տարրեր, նորաբանություններ, հնչյունային, ձևաբանական և բառակազմական առանձնահատկություններ, և այլն):
- Մասնագիտացման լեզվին (լեզվաընտանիքին/ լեզվախմբին) վերաբերող սոցիո-լեզվաբանական իրակույթները. երկլեզվություն, դիգլոսիա և այլն:
- Գրական լեզու, «կոյնե»:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) ոլորտում սուբստրատի, սուպերստրատի և ադստրատի երևույթների առկայությունը:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) հնչյունային պատկերը:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) ձևաբանական առանձնահատկությունները:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) բառակազմական առանձնահատկությունները:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) բառագիտությունը:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) շարահյուսական առանձնահատկությունները:
- Մասնագիտացման լեզվի (լեզվախմբի/բարբառախմբի) բարբառային պատկանելիությունը և այդ ոլորտում առկա խնդիրներն ու տեսությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ջահուկյան Գ.Բ., Հնդեվրոպական, խուռա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերությունը. Երևան 1967
- Андронов М.С., Дравидийские языки, Москва 1965

- Асатрян Г.С., Этническая композиция Ирана: От “Арийского простора” до азербайджанского мифа, Ереван 2010
- Баскаков Н.А., Введение в тюркское языкознание, Москва 1969
- Беликов В.И., Крысин Л.П., Социолингвистика, Москва, 2001
- Георгиев В., Исследование о сравнительно-историческому языкознанию, Москва 1958
- Гранде Б.М., Введение в сравнительное изучение семитских языков, Москва 1972
- Гранде Б.М., Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, Москва 2001
- Дьяконов И.М., Арийцы на Ближнем Востоке: конец одного мфа/ (К методике исследования исчезнувших языков) // ВДИ. — 1970/ № 4: 39-63.
- Дьяконов И. М. (ред.), Древние языки Малой Азии, Москва 1980
- Дьяконов И.М., Хуррито-урартские и восточно-кавказские языки,- Древний Восток III. Ереван 1978, сс. 25-38
- Зограф Г.А., Языки Индии, Пакистана, Цейлона и Непала, Москва 1960
- Климов Г.А., Введение в кавказское языкознание, Москва 1986
- Кононов А.Н., Грамматика современного турецкого литературного языка, М. -Л., 1956
- Лингвистический энциклопедический словарь, Москва, 1990
- Оранский И.М., Введение в иранскую филологию, Москва, 1988
- Основы иранского языкознания, Кн.I-V, 1979-1997.
- Рясанен А. М., Материалы по исторической фонетике тюркских языков, Москва, 1955
- Савченко А.Н., Сравнительная грамматика индоевропейских языков, Москва, 1974
- Семереньи О., Введение в сравнительное языкознание, Москва 2010
- Степанов Ю.С., Основы общего языкознания, Москва, 2008
- Трубачев О. Н., *Indoarica* в Северном Причерноморье, Москва 1999
- Эдельман Дж.И., Иранские и славянские языки, Исторические отношения, Москва, 2009
- Эдельман Дж.И. Сравнительная грамматика восточно-иранских языков. Лексика, Москва, 2009

- Эдельман Дж.И., Дардские языки, Москва 1965
- Эдельман Дж.И., Основные вопросы лингвистической географии (на материале индоиранских языков), Москва 1968
- Asatrian G. S., Prolegomena to the study of the Kurds,- *Iran and the Caucasus* (Brill Publishers), vol.13/ 2009:1-58
- Bazin Louis, Le Turkmène, Description grammaticale // Philologiae Turcicae Fundamenta, 1958
- Bazin Louis, Introduction à l'étude de la langue turque, Paris 1968
- Bechert H. G. von Simson (eds.), Einführung in die Indologie. Darmstadt 1979
- Benveniste Émile, Problems in general linguistics, translated by Mary Elizabeth Meek, 2 vols., University of Miami 1971
- Benveniste Émile, Indo-European language and society, translated by Elizabeth Palmer, London 1973
- Brockelmann Carl, Semitische Sprachwissenschaft, Berlin-Leipzig, 1916
- Brockelmann Carl, Arabische Grammatik, Leipzig 1960
- Edelman J.I., The Dardic and Nuristani Languages, Moscow 1983
- Hübschmann Heinrich, Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, «Zeitschrift fur vergleichende Sprachforschung der indogermanischen Sprachen», Straßburg 1877
- Mayrhofer M., Die Arier im vorderen Orient - Ein Mythos? Mit einem Bibliographischen Supplement (Österreichische Akademie der Wissenschaften, Philosophisch-historische Klasse. Sitzungsberichte, 294/3.): 93, Wien, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften 1974
- Mayrhofer M., Einiges zu den Skythen, ihrer Sprache, ihrem Nachleben, Wien 2006
- Räsänen Arvo Martti Octavianus, Versuch eines etymologischen Wörterbuchs der Türksprachen, Helsinki 1969-71, t. I—II
- Schmitt R. (ed.), Compendium linguarum iranicarum, Wiesbaden 1989
- Steiner Franz (ed.), Philologia Turcica Fundamenta, Wiesbaden 1959